

կիրակամուտն բարեկենդանի Սրբուհւոյ Աստուածածնի տօնին ընդ բազում աղօթից Որդի Աստուծոյ կենդանւոյ մինչ ի բերան էր՝ ընկողմնեալ որպէս ի քուն մնաց՝ Արարչին կամօք: Որում օրհներգական հնազանդութեամբ երկրպագութիւն, փառք եւ պատիւ ընծայեացի ի մէնջ եւ յամենայն եղականաց, ամէն: Յաղօթս յիշել մաղթեմ ի սրբոցդ զտառապեալ ԵՐԵՄԻԱՍ:

(Ձեռ. Թիւ 1058, քղ. 40բ-43բ)

### (Ա.Ռ Եպիսկոպոս ոմն)

Տեառն եպիսկոպոսի եւ քո հոգիւնկալ սրբակրօնի Տեառն Գրիգորի(\*) բանի սպասաւորի ի մէնջ ընծայելոյ հօրս նուաստի ի նոյն փափաքանաց սլասցի համբոյր շրթանցս բխմանէ սրտի. ուստի եւ յուշ նամակացդ փարելի ի մեզ հասելոց այս պատասխանի:

Ըստ Իմաստնոյն Սողոմոնի՝ Այր անմիտ ի բուն բարեկամաց քակտի եւ երախտամոռացն յաստուածաշունչ տառս է խոտելի եւ չմնայ իսկ առանց պատուհասի. զի Ծառ չար չկարէ բերել պտուղ բարի, քանզի յաւելուածոյ սրտին զչարն խօսի: Եւ այս եւս ճշմարտի առակօքն նախնի. Շուն մի կատաղի ընդ վայր հաչելն հալածի կառափնատի, ժամ զոյ որ սպանի: Բայց Տէրն ասէ. Ես ոչ դատեմ, զոյ որ զնա դատի: Սակայն որպէս դուք զրեցիք ինձ անգիտելի՝ վասն չարախօսութեան իրիցուն աւագի, կարծեմ թէ մեք չար ոչ եմք նմա հասուցեալ իսկի, քան թէ ըստ

(\*) Կը թուի թէ իր որդւոյն՝ Գրիգորիս վարդապետի կ'ակնարկէ. եթէ այդպէս է՝ անոր մահուան առթիւ գրուած նախընթաց չորս նամակներէն առաջ կ'իյնայ ներկայս ժամանակագրական կարգաւ: Ծ. Ն.